Հավելված
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
01.09.2022 թ. թիվ 1/442Լ որոշման

ԱՐՏԱՐԺՈՒՅԹՆԵՐԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԹԻՎ _____

Հայաստանի Հանրապետություն

ք. Երևան «____» «_____» 20___ թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, գործելով համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ի դեմս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ _____ մի կողմից, և _____ բանկը, գործելով համաձայն բանկի կանոնադրության, ի դեմս _____ գործադիր տնօրեն (վարչության նախագահ)՝ մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), կնքեցին սույն գլխավոր համաձայնագիրը հետևյալի մասին.

Հոդված 1. Համաձայնագրի առարկան

Սույն համաձայնագրով կանոնակարգվում են Կողմերի միջև կնքվող արտարժույթների առքի կամ վաճառքի գործարքները, որոնց արժույթները հանդիսանում են արտարժույթ:

Հոդված 2. Հիմնական հասկացությունները

2.1 Սույն համաձայնագրում կիրառվող՝ բառասկզբում մեծատառով գրված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝

2.1.1 Կենտրոնական բանկ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

2.1.2 Բանկ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկ.

2.1.3 Բանկի կոդ՝ Կենտրոնական բանկի կողմից Բանկին տրամադրված նույնականացնող հնգանիշ կոդ.

2.1.4 Արտարժույթ՝ Օտարերկրյա մեկ կամ մի քանի պետությունների տարածքում շրջանառության մեջ գտնվող օրինական վճարամիջոց հանդիսացող թղթադրամներն ու մետաղադրամները, ինչպես նաև բանկային հաշիվներում գտնվող օտարերկրյա պետությունների դրամական միավորներով արտահայտված միջոցները.

2.1.5 Առաջին կողմ (Վաճառող)՝ Հայտով նախատեսած արտարժույթ վաճառող Կողմ.

2.1.6 Երկրորդ կողմ (Գնորդ)՝ Հայտով նախատեսած արտարժույթ ձեռք բերող Կողմ.
2.1.7 Արտարժույթի առքուվաճառք՝ Կողմերի (Առաջին կողմ և Երկրորդ կողմ) միջև համաձայնեցված գործարք, որի դեպքում Առաջին կողմը պարտավորվում է Կատարման ամսաթվին Երկրորդ կողմին վաճառել (վճարել) սույն Համաձայնագրով նախատեսված Առաջին արտարժույթով, իսկ Երկրորդ կողմը՝ Առաջին կողմին՝ համապատասխանաբար՝ Երկրորդ արտարժույթով նախապես համաձայնեցված գումարները.
2.1.8 Իրավասու հասցեներ՝ սույն համաձայնագրի Հոդված 10-ում նշված Սի Բի Էյ Նեթ միջբանկային համակարգչային ցանցի Լոտուս Դոմինո էլեկտրոնային փոստի համակարգի միջոցով գործարքների կնքման համար նախատեսված հայտերի ուղարկման և ստացման էլեկտրոնային հասցեներ.
2.1.9 Հայտ՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Գործարք կնքելու առաջարկ (Հավելված 1-ին համապատասխան).
2.1.10 Իրավասու հայտ՝ այն Հայտը, որը ընդունվել և չի մերժվել Կենտրոնական բանկի կողմից.
2.1.11 Հայտի հաստատում՝ Բանկի կողմից ներկայացված Գործարք կնքելու առաջարկը Կենտրոնական բանկի կողմից բավարարելու՝ սույն համաձայնագրով սահմանված գործընթաց (Հավելված 2-ին համապատասխան): Բանկի կողմից սույն համաձայնագրի համաձայն առաքված ցանկացած Հայտ հանդիսանում է գործարքի կնքման օֆերտա.
2.1.12 Հայտի մերժում՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Հայտը Կենտրոնական բանկի կողմից մերժելու մասին ծանուցում (Հավելված 3-ին համապատասխան).
2.1.13 Գործարք՝ Կենտրոնական բանկի և Բանկի միջև սույն համաձայնագրի շրջանակներում կնքված Արտարժույթի առքուվաճառքի գործարք.
2.1.14 Կնքման ամսաթիվ (օր)՝ այն Բանկային օրն է, երբ Կենտրոնական բանկը հաստատում է Բանկի կողմից ներկայացված Հայտը.
2.1.15 Կատարման ամսաթիվ (օր)՝ այն Բանկային օրն է, երբ պետք է իրականացվի Գործարքով ամրագրված Գործարքի կատարման համար անհրաժեշտ արտարժութային գործառնությունները: Եթե Կատարման ամսաթիվը հանդիսանում է ոչ Բանկային օր, ապա Կատարման ամսաթիվ է համարվում այդ օրվան հաջորդող առաջին Բանկային օրը.
2.1.16 Գործարքի ծավալ՝ Գործարքի հիմքում ընկած Արտարժույթի միավորների թիվը.
2.1.17 Գործարքի փոխարժեք՝ Գործարքի հիմքում ընկած միավոր արտարժույթի գինը՝ արտահայտված մյուս արտարժույթի միավոր գնով.
2.1.18 Բանկի դրամային թղթակցային հաշիվ Կենտրոնական բանկում՝ Բանկի անունով Կենտրոնական բանկում բացված և վարվող ՀՀ դրամով թղթակցային հաշիվ.
2.1.19 Բանկի արտարժութային հաշիվ՝ Բանկի անունով Կենտրոնական բանկում կամ այլ ֆինանսական կազմակերպությունում արտարժույթով հաշվառվող թղթակցային հաշիվ.

2.1.20 Կենտրոնական բանկի արտարժութային հաշիվ՝ Կենտրոնական բանկի անունով ֆինանսական կազմակերպությունում արտարժույթով հաշվառվող թղթակցային հաշիվ.

2.1.21 Բանկային օր՝ օրացուցային շաբաթվա այն օրը, երբ Կենտրոնական բանկը իրականացնում է իր հաճախորդների բանկային սպասարկումը.

2.1.22 Գործառնական օր՝ Բանկային օրվա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում իրականացվում է Կենտրոնական բանկի հաճախորդների սպասարկումը, իսկ սույն Համաձայնագրով հատուկ սահմանված դեպքերում՝ մինչև այն պահը/ժամանակահատվածը, երբ Կողմերին թույլատրվում է ուղարկել առաջարկ, հաստատում կամ այլ հաղորդագրություն.

2.1.23 Գործարքի կատարում՝ կնքված Գործարքի Կողմերի կողմից այդ Գործարքով ստանձնած իրենց փոխադարձ պարտավորությունների կատարում.

2.1.24 Անակցեպտ արտարժութային գործողություն՝ արտարժութային գործառնություն, որի ժամանակ Կենտրոնական բանկը առանց Բանկի լրացուցիչ հանձնարարականների ստացման, Գործարքի ծավալի չափով արտարժույթը գանձում է Կենտրոնական բանկում հաշվառվող Բանկի արտարժութային հաշվից կամ մուտքագրում է Կենտրոնական բանկում հաշվառվող Բանկի արտարժութային հաշվին.

2.1.25 Թղթակցային հաշիվների տվյալներ (ԹՀՏ)՝ այլ բանկերում ունեցած այն թղթակցային հաշիվների տվյալները, որոնք կողմերը տրամադրում են միմյանց՝ վճարումները (փոխանցումները) այդ հաշիվներին կատարելու նպատակով.

2.1.26 Հաշվարկների ռիսկ չկրող կողմ՝ Գործարքի այն կողմը, որի պարտավորությունների կատարումը պայմանավորված է մյուս կողմի պարտավորությունների փաստացի կատարմամբ.

2.1.27 Թվաբանական կլորացման կանոններ՝ կլորացման այն մեթոդը, որի դեպքում կլորացման ենթակա միավորը չի փոխվում, եթե կլորացման ենթակա միավորին հաջորդող թիվը հավասար է 0-4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա միավորին հաջորդող թիվը հավասար է 5-9-ի:

2.2 Կողմերի միջև սույն համաձայնագրից բխող, սակայն Համաձայնագրով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

2.3 Կողմերը Գործարքներ կնքելու պարտավորություն չունեն, և իրենց սեփական կամքով և ֆինանսական և այլ գործոնների սեփական գնահատման հիման վրա են մտնում Գործարքներով ամրագրված իրավահարաբերությունների մեջ:

Հոդված 3. Գործարքների և հաշվարկների իրականացման կարգը

3.1 Գործարքները համաձայնեցվում են երկկողմանի բանակցությունների միջոցով: Երկկողմանի բանակցությունների արդյունքում համաձայնեցված Գործարքի պայմանները նշվում են Հայտի մեջ:

3.2 Գործարքներ կնքելու նպատակով Հայտերի ներկայացումը, ընդունումը, մերժումը կատարվում են հետևյալ ընթացակարգերի համաձայն.

3.2.1 Բանկը Կենտրոնական բանկի երկկողմանի բանակցությունների հիման վրա Գործարք կնքելու Հայտ է ներկայացնում Կենտրոնական բանկին:

3.2.2 Հայտերը կարող են ներկայացվել էլեկտրոնային եղանակով, հետևյալ կերպ.

3.2.2.1 Էլեկտրոնային եղանակով կնքվող Գործարքների համար Հայտերը ներկայացվում են Սի Բի Էյ Նեթ միջբանկային համակարգչային ցանցի Լոտուս Դոմինո էլեկտրոնային փոստի համակարգի միջոցով Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով և սույն Համաձայնագրի Հոդված 10-ում սահմանված իրավասու էլեկտրոնային փոստի հասցեներից.

3.2.2.2 Էլեկտրոնային եղանակով ներկայացվող Հայտերը կոդավորվում են սույն համաձայնագրի Հավելված 1-ով սահմանված ֆայլին համապատասխան Մայքրոսոֆթ Էքսել 2003 (կամ ավելի նոր) տարբերակով (այլ կերպ ներկայացված Հայտը չի ընդունվում): Ներկայացվող ֆայլի անվանման կոդը պետք է ունենա հետևյալ տիպային կառուցվածքը առանց բացատների.

Բանկի կոդը	գծիկ	տեսակ	կետ	Հապավում*
15200	**-**	**FX**	**.**	**xls**

*xls հապավումը կարող է լրացված լինել Մայքրոսոֆթ Էքսելի նոր տարբերակներին համապատասխան, օրինակ՝ xlsx:

3.2.3 Համաձայնագրի 3.2.2.2 ենթակետում նշված կոդավորման կարգը չպահպանելու դեպքում Հայտը ենթակա է մերժման: Կենտրոնական բանկ Հայտի ներկայացման պահ է համարվում Սի Բի Էյ Նեթ միջբանկային համակարգչային ցանցի Լոտուս Դոմինո էլեկտրոնային փոստի համակարգի կողմից առաքումը հաստատող ժամը: Բանկը երկկողմանի բանակցություններով Գործարքի Հայտը ներկայացնում է համաձայն երկկողմանի բանակցությունների՝ մինչև Հայտի ընդունման համար պայմանավորված ժամը:

3.2.4 Կենտրոնական բանկի կողմից ընդունված սույն համաձայնագրի պահանջներին չբավարարող և/կամ երկկողմանի բանակցություններով չսահմանված Հայտը(երը) մերժվում է(են) և չի (չեն) համարվում Իրավասու հայտ(եր), ինչի վերաբերյալ Կենտրոնական բանկը ծանուցում է Բանկին սույն համաձայնագրի Հավելված 3-ում սահմանված ձևի միջոցով:

3.2.5 Կենտրոնական բանկը Հայտը Բանկի կողմից ներկայացվելու դեպքում կարող է հաստատել կամ մերժել Հայտի ընդունման պահից 3 (երեք) ժամվա ընթացքում:

3.2.6 Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկն իր հայեցողությամբ և առանց որևէ պատճառաբանության իրավասու է միակողմանիորեն մերժել Բանկի կողմից ներկայացված հայտը:

3.2.7 Բանկի կողմից Կենտրոնական բանկին առաքված Հայտը չի կարող հետ կանչվել:

3.3 Գործարքների կնքումը կատարվում է հետևյալ կերպ.

3.3.1 Եթե Բանկը Կենտրոնական բանկից ստանում է Հայտի հաստատումը, ապա Գործարքը համարվում է կնքված՝ Հայտի հաստատման մեջ սահմանված պայմաններով:

3.3.2 Կնքված յուրաքանչյուր Գործարք համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մաս:

3.4 Սույն համաձայնագրի 3.3 կետի համաձայն կնքված Գործարքները կատարվում են հետևյալ կարգով.

3.4.1 Սույն համաձայնագրով նախատեսված գործառնությունները իրականացվում են բացառապես վճարման անկանխիկ ձևով, ընդ որում, Կողմը փոխանցում է վերոհիշյալ գումարը մյուս Կողմի թղթակցային հաշվին, կամ Կենտրոնական բանկը ելքագրում կամ մուտքագրում է այդ գումարը իր մոտ հաշվառվող Բանկի համապատասխան թղթակցային հաշվից կամ հաշվին (առկայության դեպքում):

3.4.2 Եթե Կողմերը բանակցությունների միջոցով այլ պայմաններ չեն նախատեսել, ապա սույն համաձայնագրով նախատեսված գործառնությունները իրականացվում են Կենտրոնական բանկում հաշվառվող Բանկի արտարժութային թղթակցային հաշիվներով՝ անակցեպտ արտարժութային գործողությունների միջոցով: Առանձին դեպքերում արտարժութային փոխանցումների թղթակցային տվյալների վերաբերյալ Կողմերը կարող են պայմանավորվել Գործարքներ կնքելուց հետո:

3.4.3 Փոխադարձ վճարումների առավել արագ և անսխալ իրականացման նպատակով կողմերը սույն համաձայնագրին կից փոխանակում են (կամ միակողմանիորեն տրամադրում են մյուս կողմին) այլ բանկերում իրենց ունեցած այն թղթակցային հաշվի տվյալները (ԹՀՏ-ներ), որոնք պետք է օգտագործվեն մյուս բանկերի կողմից վճարումների (փոխանցումների) կատարման ընթացքում:

3.4.4 ԹՀՏ-ները կիրառելի են սույն համաձայնագրի շրջանակներում կատարվող բոլոր վճարումների (փոխանցումների) համար՝ տրամադրող բանկի կողմից նշված օրվանից սկսած, բայց ոչ շուտ, քան ծանուցումից հետո 3-րդ (երրորդ) բանկային օրվանից սկսած:

3.4.5 Բանկը կարող է Կենտրոնական բանկին ներկայացնել մեկ ԹՀՏ յուրաքանչյուր արժույթով: Բանկի կողմից տվյալ արժույթով ԹՀՏ-ն կարող է փոխվել 3.4.4 կետի պայմանի համաձայն:

3.4.6 Կենտրոնական բանկը Բանկին կարող է ներկայացնել մի քանի ԹՀՏ նույն արժույթով: ԹՀՏ-ով Գործարք կատարելու դեպքում Գործարքի հայտի հաստատման «Արտարժույթը փոխանցել» դաշտում արտացոլվում է Գործարքի համար նախընտրված Կենտրոնական բանկի ԹՀՏ-ն:

3.4.7 Կնքված Գործարքները պետք է կատարվեն ամբողջությամբ՝ Գործարքի ծավալի չափով, այսինքն՝ մասնակի կատարում չի իրականացվում:

3.4.8 Գործարքով ամրագրված պարտավորությունները կատարելիս Հաշվարկների ռիսկ չկրող կողմ է հանդիսանում Կենտրոնական բանկը: Բանկի կողմից Գործարքով իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կենտրոնական բանկը կարող է հրաժարվել Գործարքով իր պարտականությունները կատարելուց և Բանկից պահանջել հատուցելու պատճառված վնասները՝ բացառությամբ եթե Գործարքի չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը պայմանավորված է Հոդված 8-ով սահմանված հանգամանքներով:

3.4.9 Անակցպետ արտարժութային գործողությամբ փաստացի կատարված գործառնությունները հանդիսանում են Բանկի կամ Կենտրոնական բանկի արտարժութային հաշվին մուտքագրումներ կամ ելքագրումներ:

Հոդված 4. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

4.1 Կողմերը պարտավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում ապահովել կնքվող Գործարքների գաղտնիությունը:

4.2 Կողմերը պարտավորվում են սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում և պայմաններով կատարել համապատասխան փոխանցումները:

4.3 Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում Բանկի թղթակցային հաշիվներից անակցեպտ կարգով գանձել սույն համաձայնագրի Հոդված 5-ով նախատեսված տուժանքի գումարները:

Հոդված 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Գործարքի Կողմը Կատարման ամսաթվին մինչև գործառնական օրվա ավարտը սույն համաձայնագրով կնքված Գործարքի պայմաններով Գործարքի ծավալի չափով արտարժույթի մուտքագրումը մյուս Կողմի արտարժութային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար Գործարքի ծավալի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով:

5.2 Սույն համաձայնագրի 5.1 կետով նախատեսված տուժանքները հաշվարկվում են Կատարման ամսաթվից հաշված առավելագույնը երկու Բանկային օր, որից հետո պարտավորությունը չկատարելու պարագայում տվյալ Գործարքով կողմերի ստանձնած պարտավորությունների հետագա կատարումը դադարում է:

5.3 Սույն համաձայնագրի 5.1 կետով նախատեսված տուժանքները գանձելիս Բանկի թղթակցային հաշվում գանձնման ենթակա գումարի բացակայության կամ մասնակի առկայության դեպքում Կենտրոնական բանկը բանկի թղթակցային հաշվից գանձում է համապատասխան դրամական միջոցները դրանց առկայության առաջին իսկ պահին, առկա գումարի չափով, մինչև գանձնման ենթակա տուժանքների ամբողջական մարումը:

Հոդված 6. Վեճերի լուծման կարգը

6.1 Սույն համաձայնագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Սույն համաձայնագրով որևէ Կողմին ներկայացված առարկությունները վերջինիս կողմից ենթակա են պարզաբանման հինգ Բանկային օրվա ընթացքում:

6.2 Կողմերի միջև առաջացած վեճերը 1 (մեկ) ամսվա ընթացքում բանակցությունների միջոցով չլուծվելու դեպքում լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ՀՀ դատարանում:

Հոդված 7. Համաձայնագրի գործողության ժամկետը

7.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

7.2 Բանկը զրկվում է սույն համաձայնագրով նախատեսված Գործարքներ կնքելու իրավունքից, եթե առկա են «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անվճարունակության հիմքերը կամ դրանցից որևէ մեկը, Բանկի բանկային գործունեության լիցենզիան անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվել:

7.3 Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում (ներառյալ սույն համաձայնագրի 7.2 կետում նախատեսված դեպքի) Կողմերի՝ սույն համաձայնագրով ստանձնած և չկատարած պարտավորությունները ենթակա են պարտադիր կատարման, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ Կողմերի համաձայնությամբ:

7.4 Ցանկացած Կողմ կարող է միակողմանի լուծել սույն համաձայնագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ գրավոր կերպով ծանուցելով մյուս Կողմին:

7.5 Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է Գործարքի կնքումից առնվազն երկու Բանկային օր առաջ գրավոր ձևով սույն համաձայնագրի մյուս Կողմին տեղեկացնել իրավաբանական, փոստային, իրավասու էլեկտրոնային հասցեների, վճարային

ռեկվիզիտների, հեռախոսի, ֆաքսի և այլ փոփոխությունների մասին, որոնք ապահովում են սույն համաձայնագրով սահմանված դրույթների կատարումը:

Հոդված 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս մաժոր)

8.1 Կողմերը պատասխանատվություն չեն կրում, եթե սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է անհաղթահարելի ուժի: Մասնավորապես՝ պատերազմի, տարերային աղետի և այլ նման ուժերի, որոնք կողմն ի վիճակի չէ կանխարգելել և կանխատեսել, և որոնք ուղղակիորեն ազդում են ստանձնած պարտավորությունների չկատարման վրա: Սույն կետի իմաստով՝ ֆորսմաժորային հանգամանքներ չեն համարվում գործադուլները, պարտավորությունների խախտումը Կողմերի կոնտրագենտների կողմից, դրամական միջոցների բացակայությունը, շուկայում անհրաժեշտ ապրանքների բացակայությունը և այլ, որոնք խախտող կողմը կարող էր վերացնել՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ:

8.2 Ֆորսմաժորային հանգամանքներ ստեղծվելու պահից 3 (երեք) օրացուցային օրվա ընթացքում Կողմերը միմյանց տեղեկացնում են այդ մասին: Ֆորսմաժորային հանգամանքի առկայությունը պետք է ապացուցի այն վկայակոչող կողմը:

8.3 Ֆորսմաժորային հանգամանքների առկայության դեպքում Կողմերն ազատվում են իրենց պարտավորություններից այնքան ժամանակով, որքան պահանջում են ստեղծված հանգամանքները: Կողմերը պարտավորվում են անել հնարավորինը ստեղծված հանգամանքների ազդեցությունը սույն Համաձայնագրի կատարման վրա թուլացնելու առումով: Ֆորսմաժորային հանգամանքների առկայության դեպքում Կողմերը ընդհանուր ուժերով փնտրում են ուղիներ և պայմաններ սույն Համաձայնագրի գործողությունը շարունակելու համար:

Հոդված 9. Այլ դրույթներ

9.1 Գործարքի շրջանակում Կողմերի միջև ծագած, սակայն սույն Համաձայնագրով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.2 Սույն համաձայնագրի լրացումները և փոփոխությունները համարվում են օրինական, եթե վերջիններս գրավոր ձևով կազմված և համատեղ ստորագրված են Կողմերի կողմից:

9.3 Իրավական ակտերը, որոնց վրա հղում է կատարվում սույն համաձայնագրում, ինչպես նաև դրանց հետագա փոփոխությունները և լրացումները պարտադիր են Կողմերի համար՝ իրավական ակտի ընդունման մասին Բանկին ցանկացած եղանակով ծանուցելու օրվանից՝ առանց սույն համաձայնագրի 9.2 կետով նախատեսված կարգով համաձայնագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու:

9.4 Սույն Համաձայնագրի շրջանակներում ծանուցումները, տեղեկացումները, հաղորդումները (այսուհետ՝ Ծանուցումներ) կատարվում են գրավոր: Սույն

Համաձայնագրով նախատեսված Ծանուցումները Կողմերի համաձայնությամբ համարվում են պատշաճ տրամադրված, իսկ սույն Համաձայնագրի համապատասխան կողմը՝ պատշաճ ծանուցված, եթե այն գրավոր ձևով ուղարկվել է սույն Համաձայնագրի Հոդված 10-ով սահմանված Կողմի իրավասու էլեկտրոնային հասցեով կամ առաքվել վավերապայմաններում նշված հասցեներով:

9.5 Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է երկու օրինակից (յուրաքանչյուր Կողմին՝ մեկական օրինակ), որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրին կից հավելվածները կազմում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

Հոդված 10. Կողմերի իրավաբանական հասցեները և վավերապայմանները

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ	Բանկի անվանում
Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Վ.Սարգսյան փ., 6	Հայաստանի Հանրապետություն, , ք.Երևան, փ.,
Հեռախոս՝	Հեռախոս՝
Ֆաքս՝	Ֆաքս՝
	Թղթակցային հաշիվներ Կենտրոնական բանկում՝ ԱՄՆ դոլար ԵՎՐՈ
Իրավասու էլեկտրոնային հասցե (Սի Բի Էյ Նեթ)՝ 1.	Իրավասու էլեկտրոնային հասցե (Սի Բի Էյ Նեթ)՝ 1. 2. 3.
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝	Բանկի գործադիր մարմնի ղեկավար՝
«____» «_____» 20_____ թ.	«____» «_____» 20_____ թ.

Հավելված 1

ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՅՏ

Հայտի N		
Համաձայնագրի N		
Համաձայնագրի կնքման ամսաթիվ		
Հայտն ուժի մեջ է մինչև ժամը		
Առաջին կողմ (Վաճառող)	Կոդ	
	Անվանում	
Երկրորդ կողմ (Գնորդ)	Կոդ	
	Անվանում	
Կնքման ամսաթիվ (օր)		
Կատարման ամսաթիվ (օր)		
Առաջին կողմի Արտարժույթի ISO կոդ		
Երկրորդ կողմի Արտարժույթի ISO կոդ		
Գործարքի ծավալ Առաջին Արտարժույթով		
Գործարքի փոխարժեք		
Գործարքի ծավալ Երկրորդ Արտարժույթով		
Հաշվարկների ռիսկը չկրող կողմը		ՀՀ կենտրոնական բանկ
Այլ նշումներ		

Բանկի գործադիր մարմնի ղեկավար՝	

Հավելված 2

ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՅՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Հայտի N		
Համաձայնագրի N		
Համաձայնագրի կնքման ամսաթիվ		
Հայտն ուժի մեջ է մինչև ժամը		
Առաջին կողմ (Վաճառող)	Կոդ	
	Անվանում	
Երկրորդ կողմ (Գնորդ)	Կոդ	
	Անվանում	
Կնքման ամսաթիվ (օր)		
Կատարման ամսաթիվ (օր)		
Առաջին կողմի Արտարժույթի ISO կոդ		
Երկրորդ կողմի Արտարժույթի ISO կոդ		
Գործարքի ծավալ Առաջին Արտարժույթով		
Փոխարժեք		
Գործարքի ծավալ Երկրորդ Արտարժույթով		
Հաշվարկների ռիսկը չկրող կողմը		ՀՀ կենտրոնական բանկ

Հայտի ընդունման ամսաթիվ	
Հայտի ընդունման ժամ	
Արտարժույթը փոխանցել	
Այլ նշումներ	

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝	

ԱՐՏԱՐԺՈՒՅԹՆԵՐԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հավելված 3

ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՅՏԻ ՄԵՐԺՈՒՄ

Հայտի N	
Համաձայնագրի N	
Համաձայնագրի կնքման ամսաթիվ	
Բանկի կոդ	
Բանկի անվանում	
Կնքման ամսաթիվ (օր)	
Հայտի ընդունման ամսաթիվ	
Հայտի ընդունման ժամ	

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝	